

ԱՂԷՏ ՄԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Արդէն 5-6 ամիսներէ ի վեր, Մելգոնեանի հարցը մեր մտահոգութեան առարկան է Կիպրոսի մէջ թէ տարբեր գաղութներ. բոլորս մտահոգ ենք, սրտցաւ կ'ապրինք ու պայքարինք եւ կը սպասէինք բարոտ լուծումի մը՝ «պատասխանատու» անհատներու կողմէ:

Սակայն, ըստ երեւոյթիմ, մեր պատուարժան Կեղրոնական Վարչութեան անդամները այսքան աղմուկին եւ մտահոգութեանց, տակաւին կը մտածեն այնպէս, ինչպէս որ իրենք ճիշդ ձեւով կը տեսնեն եւ անվարան կ'ուզեն իրականացնել հայկական դպրոցի մը վաճառման ազգադաւ որոշումը:

Դաւադրարար, ամիսէ ամիս խուսափելով իրենց վերջնական ծրագիրէն, այդ ձգձգելով Դեկտեմբերէն Յունուար եւ ապա Մարտ ամիսը, վերջապէս յանգեցան Մելգոնեանը վաճառելու որոշումին: Որոշման պաշտօնական հաղորդագրութեան մէջ կը տեսնենք տասնեակ մը անհիմն պատրուակներ, որոնք պարզապէս ծիծաղ կը պատճառեն լրջախոհ ընթերցողին մօտ: Պաշտօնական հաղորդագրութիւնը ստորագրած են 16 պատասխանատուութեան կոչուած կասկածելի հայեր, որոնց համար, ըստ երեւոյթիմ, դպրոց թէ մշակոյթ, բնաւ արժէք չունին. անոնք մե՛ծ հաճոյքով եւ անտարբերութեամբ կ'ոտնակոխեն մեր պատմութիւնն ու յիշատակները: Սակայն, բոլորիս յտակ է արդէն, որ այդ «պատասխանատու» մարմնին մէջ մէկ անձի քմայքն ու որոշումն է, որ կ'իշխէ. ան կ'ուզէ, որ աշխարհատարած ու հեղինակատր, բազմամտն է պատկանելի մեր միութիւնը շեղի իր գերագոյն եւ հայրենասիրական նպատակէն, ան միութեան ճակատագրին եւ բարոյական ու ազգային սկզբունքներուն հետ է որ կը խաղայ. եւ զարմանալիմ այն է, որ Կեղրոնական Վարչութեան միւս անդամները հլու-հնազանդ կը հետեւին այդ տիկնոջ որոշումին, ձեռք կը բարձրացնեն ու կը քուէարկեն անոր խելապատիկէն քիսած ծրագիրին: Անոնք կը մոռնան, որ որեւէ միութեան մէջ անդամներ ունին իրենց խօսքն ու կարծիքը. մեր Միութիւնը այնպիսին էր, որուն անդամները կը հաւատան ժողովրդավարութեան եւ կարծիքի ազատութեան: Բայց, արդէն միութիւնը ինչպէ՞ս է մէկ հոգիի իշխանութեան տակ եւ կարծէք ան կ'ուզէ բոլորս դարձնել իր սեփական մեքենան:

Ո՛չ սիրելիներ, հազար անգամ ոչ. մեր Միութիւնը այս չէ. այնտեղ կայ միութենականի խօսք ու կարծիք. մեր միութեան նպատակը ուրիշ է, մեր կազմակերպութեան նպատակը ինքնին միութեան մէջ է. մեր նշանաբանը պարզ է՝ միութիւնը գորութիւն է: Եւ եթէ վերջին շրջանին ընտրուած Կեղրոնական Վարչութեան անդամները տեղեակ չեն իրենց միութեան գաղափարախօսականէն, շատ աւելի լաւ պիտի ըլլար որպէս համեստ միութենականներ իրենց տեղերը զիջին այն մարդկանց, որոնք կրնան Բարեգործականի անդամի վայել ձեւով միութիւն ղեկավարել: Այսօր մենք կ'ապրինք ճգնաժամ, երբ 78 ամեայ դպրոցի մը ապագան որոշելը դարձած է խաղալիք՝ շնորհիւ ձեր անպատասխանատուութեան եւ ձեր ոչ հայեցի ու ապազգային դիմագիծին:

Ուսուցիչներ, ծնողներ կամ հիւրեր յուզախառն աչքերով իրար հարց կու տան՝ թէ ի՞նչ անմարդկային խիղճով, ինչպիսի՞ ազգային անպատասխանատուութեամբ կ'ուզեն փակել եւ լռեցնել Մելգոնեանի աշակերտութեան ձայնը, երբ հայ դարձան եւ հայ զգացին Մելգոնեանէն մերս միայն: Ինչպէ՞ս կարելի է շյուզուիլ այն աշակերտին ի տես, որ 3-4 ամիս առաջ Սպանիայէն կու գար առանց բառ մը իսկ հայերէն խօսելու, իսկ ահա Փետրուար 13-ին կազմակերպուած աշակերտական ձեռնարկի մը ընթացքին կ'արտասանէր

Յովհաննէս Թումանեան: Եթէ ողջ ըլլար մեր միութեան ցկեանս նախագահը եւ մեր միութեան վարկը միշտ բարձր պահած Ալեք Մանուկեան ղեկավարը, անկասկած յուզախառն աչքերով պիտի լսէր այս աղջնակին եւ պիտի տեսնէր թէ իր դուտորը վերջին 10 տարիներու ընթացքին յանկարծ որոշեց «բարեկաւել» Մելգոնեանը՝ սակայն վաճառելու ցանկութեամբ յանձինս իր պաշտօնեային, որ յատուկ հայկական հաստատութիւններ վաճառող մըն է՝ պրն. Կորտըն Անտերսընը:

Այսօր յայտարարուած է արդէն, որ վաճառման սեղանին է Մելգոնեանը: Սակայն կրկին կը շեշտենք, երբ արդէն միութիւնը 2 տարի ետք կ'աւարտէ իր 100 ամեակը, բայց այդ մէկը թող չըլլայ ի հաշիւ իր անդրամիկ կառոյցին՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան վաճառումով:

Ազգակործան այս որոշումը ստորագրած «պատասխանատու» անդամներ ի՞նչ խիղճով եւ զգացումով պիտի յայտնուին պատմութեան դատաստանին. անոնք ի՞նչ պատասխան պիտի տան Պօղոս Նուպար Փաշային հիմնած միութեան, անդամներուն եւ Ալեք Մանուկեանով բարգաւաճած կազմակերպութեան: Անհատներ որոնք կը խոչընդոտեն մեր միութեան հայրենասիրական առաքելութեան իրագործումը, արգելք կը հանդիսանան նոր սերունդի հայեցի կերտման գիտակցօէրն կամ ոչ շարունակելով այն աշխատանքը որուն նախածեռնեցին Իթիհատի ղեկաւարները 1915:

ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Նիկոսիոյ Հ.Բ.Ը.Մ.ի Գործադիր Վարչութեան անդամ